# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## N ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/20 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Մեծամոր 14.09.2020թ.

«Մեծամորի համայնքապետարանն», ի դեմս համայնքի ղեկավար Ռ.Գրիգորյանի, ով գործում է Մեծամորի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ժիլյո» Ա/Կ-ն, ի դեմս տնօրեն Ս.Ավագյանի, ով գործում է «Ժիլյո» Ա/Կ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **20.08.2020թ.** կնքված N **ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/20** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի թիվ 35 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանք)՝ գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվի պահանջներին համապատասխան Աշխատանքները՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կապալառուի կողմից իրականացվելիք Աշխատանքի գինը կազմում է 17 208 389 (տասնյոթ միլիոն երկու հարյուր ութ հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ, որից 2 868 065 (երկու միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար վաթսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

**Ընդ որում պայմանագրի գնից 8 604 194,5 ՀՀ դրամը Պատվիրատուի կողմից՝ որպես համայնքի ներդրում, Կապալառուին կփոխանցվի Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում, իսկ Պայմանագրի մնացած գումարը կփոխանցվի Կապալառուի կողմից աշխատանքները ողջ ծավալով կատարելուց հետո, հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, ՀՀ կառավարության կողմից սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 8 604 194,5 ՀՀ դրամ գումարը համայնքին տրամադրվելուց հետո:**

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900332239111, 900332000877
ՀՎՀՀ 04402328
Համայնքի ղեկավար

Ռ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ժիլո» Ա/Կ
ք.Երևան, Բագրատունյանց 69
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004610859
ՀՎՀՀ 02205353
Տնօրեն

Ս.Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
N ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/20 ծածկագրով պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 35 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի թիվ 35 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ | *Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը* | 30 օրացուցային օր |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | *Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը* | 30 օրացուցային օր |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900332239111, 900332000877
ՀՎՀՀ 04402328
Համայնքի ղեկավար

_____ Ռ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ժիլյո» Ա/Կ
ք.Երևան, Բագրատունյանց 69
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004610859
ՀՎՀՀ 02205353
Տնօրեն

_____ Ս.Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
N ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/20 ծածկագրով պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45261124/503 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի թիվ 35 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ | 4 302 097,25 | 8 604 194,5 | 17 208 389 | 17 208 389 | 17 208 389 | 17 208 389 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900332239111, 900332000877
ՀՎՀՀ 04402328
Համայնքի ղեկավար

_____ Ռ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ժիլո» Ա/Կ
ք.Երևան, Բագրատունյանց 69
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004610859
ՀՎՀՀ 02205853
Տնօրեն

_____ Ս.Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.